



## ԱՂՕԹՔ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏՆ ԱՍԷ ԶԱՂՕԹՍ.

Տէր Աստուած, որ մեծոյ են և սքանչելի, զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իղւս այս՝ իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց և մարմնոց. շնորհք հոգևորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէն հաւատոյ, նահատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց բանաւրկոյին. ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաիտենական, զի որ ոք օճցի ի ամանէ՝ վերստին ծննդեան իղովս, երկիւղած լիցի յԱստուծոյ և աներկիւղ ի հակառակորդէն: Եւ առաջի կալով քեզ յաւորն դատաստանի՝ փայլեցին որպէս զաստեղս երկնից ի պայծառութիւն սրբոց, ոչ ունելով զարատ կամ զաղտելութիւն, այլ ընկալցին զհանգիստն յաիտենական, ի գործս բարիս հաստատեալ ի պարզևս շնորհացս այսոցիկ, և ընկալցին զյաղթութեան նշանակն՝ վերստին կոչման յողորմութիւն գթութեան Քրիստոսի քո:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏՆ ԱՍԷ ԶԱՂՕԹՍ.

Սուրբ ահաւոր անուն, լոյս ի լուսոյ և ծագումն ի Հօրէ Աստուած բոլորից և ստեղծիչ գոյից՝ Տէր կամարար Յիսուս Քրիստոս որդի Աստուծոյ, արարիչ ընդ Հօր քում և ընդ Հոգւոյդ՝ ամենայն էից՝ որ են ի տեսման և ի ծածկութեան. որ ետդ՝ և էիր միշտ անթերի լրութիւն, առեր զմերս իսկապէս, զի ի լրութենէ քումմէ լցուցես զամենեսեան՝ օճեալ Աստուածութեամբդ, և օծումն համայնից ի քոյդ անուանեցելոց: Որոյ սկզբնաձիր օճմանս այս շնորհի՝ զօրս զայս ցուցեր մեծի հինգաբարթօս ստուերականի և հնոյ օրհնիս զատկի, յորում սօնեմք պարերգութեամբ հրեշտակօրէն յատակամտաբար զպարզևաբաշխ առատատրութիւն ամենիմաստիդ յիւղ զուարթ ամբիծ դաւանման, զոր ի վերուստ օրհնօքն և մարգարէիքն օրհնակեցեր զճշմարտութիւն այսմ լուսափայլ իւղոյ օծութեան: Անւրբստին ի հարցն գծագրեցեր զօրհնակն՝

մինչև ի լրումն ածեր զիսկությունն ճշմարտապետ: Քանզի առ Նոյի ի ձեռն սաղարթին ձիթեանոյ բերմամբ աղանույն յետ հեղեղեղոցն մեղօք ջրովք հեղձականին՝ ծանուցեր զաղանակերայ Հոգւոյ քո իջումն ի վերայ նորածնելոցն՝ զորդեգրութեանն պայման բերելով սովին օծմամբ զկնի մեղացն հեղձանելոյ ի ջուրս աւազանին: Մելքիսեղեկ յօրինակ ճշմարտիդ ահաորութեան՝ ի ձիթաստանեաց լերինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյդ Աստուծոյ կացին՝ ի վերնոց անտի հրեշտակաց ի պտղոց տեղւոյն իւղեալ օծաւ քահանայ և թագաւոր: Անուանեցեր օծեալ և զհայրն արդարոց զԱբրահամ՝ ի ձեռն ըստ մարմնոյ քո հօր. «Մի՛ մերձենայք, ասէ, յօծեալս իմ»: Յակոբ զբարն ի խորհուրդ խորանին օծմամբն տպաւորեալ կերպացոյց ի պատկեր վիմիդ: Ահարոնեան քահանայութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ Աստուծոյ օծմամբն պայծառանայր, որով ի գլխոյ անտի ի մորուսն զեղեալ իջանէր աստուածային իւղոյն կենդանագրութիւն ըստ սաղմոսին: Քահանայ ի հնումն յանկոխելին տեղի ոչ ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր իւղով: Թագաւորութիւնն ոչ էր պանծայի՝ եթէ ոչ եղջերք իւղոյն օրհնութեան յանուն օծելոյդ պասկաւորէր: Ի վերայ Դարթի հոգի քո բարձրացեալ յայնմ օրէ խաղաց՝ յորմէ օծութեամբ նուիրեցաւ ըստ նորուն երգակցելոյ ի դիմաց քոց. «Գտի զԴարթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա»: «Իւղ թափեալ է անուն փեսայիդ» ի հոգելից բանից իմաստնոյն կանխաւ իսկ զծագրեցաւ յԵրզոցն երգ: Զսոյն և ի դիմաց հարսինն ասէր օրհորդացն. «Հաստատեցէք զիս իւղովք, և խնձորովք ծածկեցէք»: Դարթեան ձայնն պատմէ զառեալդ օծութիւն յառողդ. «Օծ զքեզ Աստուած՝ Աստուած քո իւղով ուրախութեան»: Յաղագս քո է և ասացեալն. «Ժողովեցան իշխանք ժողովրդոց վասն Տեառն և վասն օծելոյ նորա»: Եւ Եսայիաս ի քոց ասացեալ է դիմաց, զոր և քո ընթերցեալ հաւատարիմ արարեր զբան ծառայից քոց՝ Տէ՛ր, եթէ «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս»: Եւ այլոր՝ եթեանցն հանգչել ի վերայ քո ըստ մարմնոց՝ զՀոգւոյն Աստու-

ծոյ զանազանութիւն շնորհաց թուէ: Իսկ Երեմիաս՝ «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս» զքէն երգէ, որ է օծեալ անուն: Եւ այլ ոմն մարգարէ, թէ «Որ պատմէ ի մէջ մարդկան զօծեալ իր՝ սահմանեաց իբրև զկէտ անհիւղելի»: Եւ Դանիէլ ի թիւ եօթներորդացն՝ զգալուստ օծելոյդ և զմահ քո կենդանարար յառաջագոյն գուշակեաց: Եւ դու իսկ՝ լրումնդ օրհնաց և մարգարէից՝ յօծմանէ անտի ի Յովհաննէ՝ սկսար քարոզել զանտարանն արքայութեան երկնից. յորմէ վկայեցար օծեալ և Գառն Աստուծոյ բարձող մեղաց աշխարհի: Ընկալար և զիւղըն նարդեան զհիթական յումեմէ յոտսդ՝ և յայլմէ ի գլուխդ՝ ի նշանակ սիրոյ և գթութեան քոյ առ մեզ: «Դուք զօծութիւն ունիք առ ի սրբոյն» ասաց երջանիկն առաքելութեամբ Յովհաննէս: Եւ Պօղոս ի ճառարանութեանն ասէ յայտնապէս. «Որ օծ զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս Յիսուս, Աստուած է՝ որ կնքեաց զմեզ և ետ զառեալատչեալ Հոգւոյն ի սիրտս մեր»: Ուստի և մեր զքոյդ ծանուցեալ լուսոյ օծութիւն, Տէր Յիսուս Քրիստոս, զքեզ միայն խոստովանիմք Աստուած, և թագաւոր և ճշմարիտ օծեալ, յօծելոց փառաբանեալ և երկրպագեալ միշտ երեկ և այսօր, որ զայս հիւթ օրհնութեան ձիթոյ՝ յորում սուրբ Երրորդութիւնդ խառնեալ միաորի, շնորհեցեր մեզ ճառագայթ հոգւոց, լուսաւորութիւն մտաց, տեսնուագրութիւն երեսաց, պահապան շրթանց, զօրութիւն անձանց, ախոյեան ընդդէմ դիւաց, փարատիչ ցաւոց, պահպանումն կուսից, անեցումն տղայոց, պարարումն ձերոց, ձեռնադրիչ նիւրեղոց, և պսակ թագաւորաց: Քանզի մեռոնս այս օրհնաբանեալ՝ հրաշագործէ արուեստս և սքանչելիս, և զօրութիւնս զարմանաւորս: Սոյն իւղ սրբութեան՝ զոր կարգեցեր իմաստութեամբ քո Յիսուս, օծանէ և մարգարէս, յօրհնէ և առաքեալս, յարդարէ և վարդապետս, զմեղանչական բնութեանս ծնունդ՝ վերատին ծնեալ որդիս կացուցանէ Աստուծոյ. անդաւոր պայծառութեան քո Տէր՝ զաստուստ հետնեալսն մաքրութեամբ վարուց՝ այսու օծութեամբ հրաշափառապէս առնէ հաղորդըս:

Եւ արդ՝ քանզի քո եւն շնորհք այսքա-

նեաց պարգևաց՝ օրհնաբանեալ Որդի Աստուծոյ, դու ինքն յարմարեա՛ր բարեկէշան սպասարորութեամբ զաղաչանս մեր պատճառ քեզ փառաց: Եւ զայս ձեթ լուսանիթ շնորհեա՛ր լինել մեղաւորացս առիթ բժշկութեան վիրաց աներևութից. ա՛րկ ի խոցուած մահացու թիւնից վիշապին զկաթուած օրհնութեան հողոյս փրկութեան: Արա՛ սովաւ ողորմութիւն, տո՛րք և քաւութիւն, պարգևեա՛ր բժշկութիւն, հանդերձեա՛ր շնորհ, առատաձեռնեա՛ր երանութիւն: Եղիցի սոյն ինքն որոց մատչին օծանել սովաւ՝ հարսնապանոյ՞ն պանծանօք յոգի զարդարել: Հուրս այս Աստուածային՝ լիցի մերձեցելոցս ի սա ընտրութիւն, մոյս կրկնեաց՝ ոչ ի կիզումն, այլ ի մաքրութիւն, ոչ ի դատապարտութիւն խաւարի յաղագս անմաքոր պահելոյ, այլ ի պատճառս պայծառութեան լուսոյ, վասն մաքրապէս ունելոյ զսա և ընդ Հոգւոյն յարմարեցելոյ՝ սովաւ եղիցուք և ի սոյն հուր սրբեալ, սովիմք պարարեալ եղի-

ցուք և ի սոյն լուսաւորեալ՝ այսու արդարացեալ և թագաւորեալ:

Եւ արդ՝ առ քեզ միայն խնամակալ Տէ՛ր՝ համբառնամ վերստին զձեռս սրտիս, հեծութեամբս լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբս լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբս. յո՛րք Տէր ողորմութեամբ պալկութեանց ի քէն խնորողիս: Պահեա՛ր սովաւ զեկեայքս այժմ յերկրպագութիւն քեզ առաջի աստուածընկալ քո բեմի, թողութիւն մեղաց ամենեցուն շնորհելով, և զհաղորդեալսն քեզ սովին օծութեամբ զընդհանուր ժողովուրդս քո արասցես ամբանալ լրնդիմութեանց բազմահնար վիշապին, պահպանեալք այսու մաքրութեամբ մինչև ի վախճան: Եւ քեզ միայնոյ ամենեքումքք հանդերձ՝ գոհաբանութիւն վերընծայեմք անրովբէիցն ձայնակցելով, սուրբ, սուրբ, և միայն միշտ սուրբ՝ օրհնեալ յաւերժ անդառար երգածայնութեամբ՝ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաիտեանս յաիտենից, ամէն:

